

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

**ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՄԸ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԱԹՈՌՈՅՍ**

Ս. Ծննդեան տօնի հոգեպարար արարողութեանց ընթացքին ի Բեթղեհէմ եւ ի Յորդանան գետ, հայ հաւատացեալ եւ ազգասէր ազգային մը՝ Տիար Յարութիւն Այվազեան, որ իր ընտանեկան պարագաներուն եւ հարազատներուն հետ ուխտի եկած էր Սուրբ Երկիր, 600 000 տղարի իշխանական նուիրատուութիւն մը ըրաւ Առաքելական Ս. Աթոռոյս Երուսաղէմի:



Պրն. Այվազեան՝ տեսնելով համայն Քրիստոնէութեան կեդրոնին մէջ Երուսաղէմի Պատրիարքութեան դերն ու առաքելութիւնը, անդիմադրելի զգացումը ունեցաւ ի Սիրոն յիշատակ մը կանգնելու իր սիրելիներուն եւ իրեն համար:

Նուիրատուն՝ որ տիպար հայորդի մըն է, սնած եւ ծլած հաւատացեալ ծնողաց՝ իրաքահայ Գրիգոր եւ Մարիամ Այվազեան ամուլին ընտանիքին մէջ, ծնած է Իրաք եւ 1968 թուականին գաղթած է Միացեալ Նահանգներու Գալիֆորնիա նահանգը, ուր հետեւած է ուսման եւ շրջանաւարտ եղած է որպէս քիմիագէտ: Կեանքի պայմաններու բերմամբ ան նախընտրած է կալուածական առուծախի գործով զբաղիլ եւ այդ ասպարէզին մէջ ձեռք բերած է մեծ յաջողութիւն: Իր գաղութին մէջ շօշափելի նուիրատուութիւններ ըրած է ազգային այլ եւ այլ նպատակներու համար:

Պրն. Յարութիւն Այվազեան արժանի է բոլորիս անվերապահ գնահատանքին, որուն անունը պիտի յաւերժ մնայ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Սրբատեղեաց պատմութեան մէջ:

Պրն. Այվազեան իսկական ժառանգը կը հանդիսանայ անցեալի երախտաշատ եւ երանելի բարերարներուն - հայազգի թագաւորներու, իշխաններու, իշխանուհիներու եւ հաւատացեալ մեծատուններու, որոնց առատաձեռն նուիրատուութեան կը պարտինք այսօր սուրբ Աթոռոյս եւ ազգիս Հայոց վայելած ընդարձակ իրաւունքները Սուրբ Տեղեաց մէջ: Այդ իրաւունքները տեւականապէս պահելու եւ պաշտպանելու համար պէտք ունինք Պրն. Այվազեանի նման գիտակից անձնաւորութիւններու նեցուկին: Թող Տէրը անոր ինքնաբոլիս օժանդակութեան դիմաց վարձահատոյց ըլլայ:

Այս առիթով Երուսաղէմի Հայ Պատրիարք՝ Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեան, իր սրտի շնորհակալութեան խօսքին մէջ նաեւ կոչ կ'ընէ բոլորին հետեւելու Պրն. Յարութիւն Այվազեանին եւ իր նմաններուն օրինակին որ օգնութեան հասնին մասնակցելու Երուսաղէմի սրբատեղեաց շինարարութեան եւ բարեգարդութեան գործին՝ միջազգային այս շատ կարեւոր քաղաքին մէջ:

«Երանի՛ անոնց որ յիշատակ ունին ի Սիրոն»: